ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 5(65), 30 հունիս, 2024թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Հերթական ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում սույն թվականի հունիսի 25-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում է գտնվում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ»-ի կողմից կազմված փորձագիտական խումբը: Այցի նպատակն է՝ հանդիպում-քննարկում կրթահամալիրի պետի, ղեկավար կազմի, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, վարչական կազմի, ուսանողների և շրջանավարտների ներկայացուցիչների հետ՝ տեղում փաստաթղթերի ուսումնասիրության և ռեսուրսների դիտարկման իրականացման միջոցով:

Կրթահամալիրում փորձագիտական այցը կշարունակվի մինչև հունիսի 28-ը:

ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ ՊԵԿԻՆՈՒՄ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը, ամրապնդելով համագործակցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գործընկեր բուհերի հետ, սույն թվականի հունիսի 6-19-ը Չինաստանի հանրային անվտանգության ժողովրդական համալսարանի հրավերով մասնակցեց Պեկինում կազմակերպված ամառային դպրոցին:

Կրթահամալիրի պատվիրակության կազմում էին Ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական պատրաստականության բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Հ.Քեշիշյանը (պատվիրակության ղեկավար), ակադեմիայի սովորողներ՝ ոստիկանության սերժանտ Անգելինա Հովհաննիսյանը, ոստիկանության ավագ սերժանտ Նաիրի Չիլաբյանը:

Երկշաբաթյա ծրագիրն իր մեջ ներառում էր Չինաստանի իրավապահ գործունեության մասին տեսական և գործնական դասընթացներ, ինչպես նաև ճանաչողական այցելություններ մշակութային և տեսարժան վայրեր:

Այցի ընթացքում պատվիրակության ներկայացուցիչները ծանոթացան Չինաստանի ոստիկանության բարեփոխումներին և նորարարություններին, միջազգային այլ իրավապահ կառույցների հետ իրավապահ մարմինների համագործակցությանը, չինական մշակույթին և լեզվին, այցելեցին Չինական մեծ պարիսպ, Լքված քաղաքը, Ազգային թանգարան և այլն:

Կրթահամալիրի սովորողները հնարավորություն ունեցան շփվելու ամառային դպրոցի մասնակից այլ պետությունների ոստիկանական բուհերի ուսանողների հետ:

Կրթահամալիրի պատվիրակությունն անմոռանալի տպավորություններով և հիշողություններով վերադարձավ Հայաստան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Հունիսի 11-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում առցանց ձևաչափով կայացավ 9-րդ միջազգային գիտագործնական համաժողովը:

«Հանցագործությունների քննության կրիմինալիստիկական ապահովումը» թեմայով միջոցառմանը մասնակցում էին արտասահմանյան երկրների գործընկեր բուհերի, ինչպես նաև ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի և ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ներկայացուցիչները:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը: Մասնակցության համար շնորհակալություն հայտնելով ներկաներին՝ նա ընդգծեց կրիմինալիստիկա գիտության կարևորությունը հանցագործությունների բացահայտման գործում: Մ. Մուրադյանը նաև մատնանշեց ոլորտի նորագույն ձեռքբերումների վերաբերյալ քննարկումներ անելու, գիտելիքներով ու փորձով փոխանակվելու բացառիկ հնարավորությունը, որն ընձեռում է համաժողովը:

Գիտաժողովը վարում էր ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության գնդապետ Միսակ Մարկոսյանը:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրից ելույթներով հանդես եկան ակադեմիայի ՕՀԳ և կրիմինալիստիկայի ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Հայկ Կուծանյանը, նույն ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Լուսինե Սարդարյանը և դասախոս, ի.գ.թ., ոստիկանության մայոր Ալիսա Սմբատյանը:

Գիտաժողովի օրակարգը հագեցած էր կրիմինալիստիկական նորագույն լուծումների, այդ թվում՝ արհեստական բանականության օգտագործմամբ մասնագիտական գործողությունների իրականացման վերաբերյալ վերլուծություններով:

ԱՆԱՄՊ ԵՐԿԻՆՔ ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Բնության ամենամեծ հրաշքը մանկան ծնունդն է: Երեխաները ոչ միայն ծնողների, այլև մայր ժողովրդի շարունակությունն են, հարատևության երաշխավորը: Հայ ժողովուրդը զավակապաշտ է և աննկարագրելի սիրով ու ջերմությամբ, ուշադրությամբ ու հոգատարությամբ, անասելի գգվանքով է շրջապատում երեխաներին: Ողջ աշխարհում օրինաչափորեն ձևավորվել է առանձնահատուկ վերաբերմունք մանկանց նկատմամբ:

Հունիսի 1-ին ամբողջ աշխարհը նշում է երեխաների պաշտպանության օրը: Սա չի նշանակում, որ միայն այս օրը պետք է պաշտպանել երեխաներին, ո՛չ, ամենևի՛ն, սա ընդամենը ևս մի հիշեցում է, որ երեխաներին պետք է պաշտպանել և հոգ տանել նրանց մասին ամեն րոպե, ամեն վայրկյան:

Նրանք են մեր ապագան, մեր ամբողջ կյանքի իմաստը:

Սերունդների հոգին անաղարտ կերտելու համար, սիրելի՛ ծնողներ, երեխային դաստիարակելիս մի՛ սերմանեք նրա մեջ «ես»-ի գերակայությունը, որ նա բոլորից լավն է, այլ սերմանեք առողջ ու մարդասիրական վարքագիծ, որ բոլոր երեխաներն էլ հավասար են և արժանի երջանիկ մանկություն ունենալու, ուշադրության կենտրոնում լինելու, և այդ դեպքում, կարծում եմ, աշխարհը կսկսի մի փոքր բարիանալ:

Եթե այդ օրը բնությունը պարգևում է արևոտ օր, ապա այն դառնում է կրկնակի պայծառ, լուսավոր ու ուրախալի, քանի որ ամռան առաջին օրը բազմաթիվ երկրներում նշվում է Երեխաների պաշտպանության միջազգային օրը:

Նույն օրը նշվում է ևս մեկ հուզիչ տոն՝ Ծնողների համաշխարհային օրը, որը հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանի ընթացքում՝ 2012 թվականի սեպտեմբերին, և սկսած 2013 թվականից՝ նշվում է ամեն տարի ամռան առաջին օրը՝ «աշխարհում բոլոր ծնողների պատվին»:

Տոնի նպատակն է հիշեցնել մոլորակի բնակիչներին համամարդկային արժեքների մասին, պաշտպանել և ամրապնդել դրանք՝ որպես ամուր և բարոյապես կայացած ընտանիքի հիմք: Չէ՞ որ հենց ընտանիքն է (նախ՝ ծնողները) պատասխանատվություն կրում երեխաների դաստիարակության և պաշտպանության համար, որպեսզի նրանց անձի լիարժեք ու ներդաշնակ զարգացումն ընթանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո ու փոխըմբռնման մթնոլորտում:

▶ 2

ԲԱՐԻ ԵՐԹ ՁԵԶ, ՍԻՐԵԼԻ՛ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում 2024 թվականի հունիսի 24-ը դրոշմվեց հիշվող ու տոնական օրերի ցանկում: Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման շրջանավարտներն այսօր ներկայացան կրթահամալիր՝ սպասված դիպլոմներն ստանալու, կյանքի նոր մարտահրավերներն ու նոր ուղին պատվով անցնելու միտումով:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Մ.Մարկոսյանը, ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ.Գրիգորյանը, ղեկավար կազմը, վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմը, շրջանավարտները և վերջիններիս ծնողները:

Մ.Մարկոսյանը շնորհավորեց շրջանավարտներին՝ հույս հայտնելով, որ նրանք իրենց գիտելիքները կներդնեն օրինականության ամրապնդման գործում, և հավելեց, որ չսահմանափակվեն ստացած գիտելիքներով ու համարձակ քայլերով շարժվեն առաջ:

Քսանինը շջանավարտներից վեցը գերազանցության դիպլոմ ստացան:

Ասմարե Սարգսյանը շրջանավարտների անունից շնորհակալական խոսք հայտնեց կրթահամալիրի ղեկավարությանը և ողջ պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրն իր շրջանավարտներին մաղթում է բարի երթ և մասնագիտական մեծ վերելքներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի և ՌԴ ՆԳՆ Ռոստովի իրավաբանական ինստիտուտի համատեղ աշխատանքային պլանի համաձայն՝ հունիսի 20-ին առցանց ձևաչափով կայացավ դասընթաց-քննարկում «ՌԴ ՆԳՆ ուսումնական հաստատությունների ծառայողական և կրթական կոլեկտիվներում նպաստավոր բարոյահոգեբանական միջավայրի ձևավորման հոգեբանական և մանկավարժական գործունեության հիմքերը» թեմայով: Դասընթացը վարում էր Ռոստովի իրավաբանական ինստիտուտի բարոյահոգեբանական ապահովման բաժնի պետի տեղակալ, հոգեբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության փոխգնդապետ Տատյանա Երյոմենկոն:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրից դասընթացին մասնակցեցին քոլեջի հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի, կրթահամալիրի միջազգային համագործակցության և ՏՏ բաժնի ծառայողները:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԵՎՐՈՊՈԼՈՒՄ

Մայիսի 22-24-ը Հայաստանի, Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի՝ ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և օպերատիվ համագործակցության ծրագրի (TOPCOP) 3-րդ բաղադրիչի պատասխանատուները մասնակցեցին Եվրոպոլում կայացած հերթական հանդիպմանը: Հայաստանը ներկայացնում էր ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Կարինե Սաֆարյանը: Հանդիպման նպատակն էր համատեղ ջանքերով մշակված՝ Արևելյան գործընկերության երկրներում 2021-2022 թթ. հանցավորության սպառնալիքների գնահատման տարածաշրջանային զեկույցի նախագծի բովանդակության մասով վերջնական ճշգրտումներ կատարել և խմբագրել տեքստը՝ այն համապատասխանեցնելով Եվրոպոլում ընդունված տերմինաբանությանը և զեկույցին ներկայացվող այլ պահանջներին:

ՀՀ իրավապահ մարմինների համար նախատեսված զեկույցը կհրապարակվի հունիսի կեսին:

ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄՈԼԴՈՎԱՅՈՒՄ

ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) կազմակերպված հանցավորության դեմ պայքարի և օպերատիվ համագործակցության ծրագրի շրջանակում 2024 թ. մայիսի 13- 17-ը Մոլդովայի Քիշնև քաղաքում կազմակերպվեց «Սպառնալիքների գնահատում և SOCTA մեթոդաբանություն, ռիսկերի կառավարում, օպերատիվ և ռազմավարական վերլուծություն» թեմայով հերթական տարածաշրջանային դասընթացը: Մասնակցում էին Հայաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Վրաստանի իրավապահ մարմինների ներկայացուցիչները: Հայաստանի պատվիրակության կազմում էին ՀՀ ՆԳՆ ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետի տեղակալ Վահե Ենոքյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության օպերատիվ-հետախուզական տեղեկատվության վերլուծության բաժնի պետ Լևոն Խալաթյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Կարինե Սաֆարյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության կազմակերպական վարչության կազմակերպահրավական և վերլուծության բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Հայկ Մեհրաբյանը և Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Հայկ Հարությունյանը:

Դասընթացը վարում էին Ռումինիայի, Հունաստանի ոստիկանության, Եվրոպոլի օպերատիվ և ռազմավարական վերլուծության գծով փորձագետները:

Օրակարգի առաջին թեման նվիրված էր ռազմավարական վերլուծությանը: Տրվեց սահմանումը և ներկայացվեց դրա կարևորությունը ԵՄ մակարդակում որոշումներ կայացնելու գործընթացում: Հաջորդ թեման սպառնալիքների գնահատումն ու սահմանումն էր: Ներկայացվեցին կազմակերպված հանցավորության տիպաբանությունը, սպառնալիքների առաջացման և դրանց տարածման գործոնները, սպառնալիքների հայտնաբերման ու վերհանման մեթոդները: Հաջորդիվ օպերատիվ վերլուծությունն էր: Ներկայացվեց չմշակված և մշակված տեղեկատվության տարբերությունը, վերլուծություն կատարելիս խնդիրների առաջադրման և պլանավորման, տեղեկատվության հավաքագրման, գնահատման ու համադրման փուլերը, տեղեկատվության համադրման արդյունքում հանցավոր կապերը ներկայացնելու համար տարբեր սխեմաներ և դիագրամներ կազմելու առանձնահատկությունները:

Եվրոպոլի ներկայացուցիչը ներկայացրեց ԵՄ SOCTA զեկույցի կառուցվածքը, քանակական և որակական տվյալներ հավաքագրելու նպատակով օգտագործվող ցուցիչները, տեղեկատվության հավաքագրման եղանակները, տվյալների գնահատումը, մշակումը և վերջնական զեկույցի պատրաստումը: Վերջինս ներկայացրեց նաև ապագայում հանցավորության ոլորտների զարգացման վերաբերյալ կանխատեսումներ անելու ընթացակարգը:

Օրակարգի բոլոր թեմաներին հաջորդում էին գործնական առաջադրանքները:

Թեմաների վերաբերյալ մասնակիցները լրացրին առցանց հարցաշարեր, առաջադրված սցենարների վերաբերյալ ստեղծեցին հանցավոր կապերի վերհանման սխեմաներ: Յուրաքանչյուր երկիր, ներկայացվող պահանջներին համահունչ, հանցավոր սպառնալիքների գնահատման ամփոփ զեկույց պատրաստեց: Գործնական աշխատանք եղավ նաև ապագայում հանցավոր սպառնալիքների կանխատեսումների վերաբերյալ:

Դասընթացն անցավ ակտիվ ու բուռն քննարկումների մթնոլորտում: Մասնակիցները նաև փոխանակվեցին վերլուծության բնագավառում իրենց երկրների փորձով:

ԱՆԱՄՊ ԵՐԿԻՆՔ ՄԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

1 ◀

Հունիսի 1-ը՝ երեխաների միջազգային օրը, աշխատում ենք մեր երեխաների համար տոն դարձնել, ոչինչ չխնայելով՝ գունավորել նրանց մանկությունը, լցնել քաղաքն ուրախ ճիչերով, մանուկների անհոգ ու կարկաչուն ծիծաղով:

Չէ՞ որ այդ օրն իրենցն է, և, ընդհանրապես, մեր ապագան է այսօրվա երեխաներինը:

Թող այս օրը և ձեր կյանքի մնացած բոլոր օրերը, սիրելի՛ երեխաներ, լցված լինեն անսպառ ուրախությամբ ու զիլ ծիծաղով, երգ ու խնդությամբ, ամենաթանկագին երազանքների ու հրաշքների իրականացմամբ:

Մեր պարտքն է անել հնարավորը, որպեսզի ձեր մանկությունն անցնի խաղաղ ու զարգացող հայրենիքում, որպեսզի դուք մեծանաք առողջ ու երջանիկ՝ շրջապատված անսահման ջերմությամբ ու հոգատարությամբ, ստանաք որակյալ ու ժամանակակից կրթություն:

Սիրելի՛ երեխաներ, ապրեք երջանիկ ու խաղաղ երկնքի տակ:

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՈՒՄ

2024 թ. հունիսի 17-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման 3-րդ կուրսի՝ ուսումնական պրակտիկա անցնող սովորողների հրահանգավորումը:

Պրակտիկայի հրահանգավորմանը մասնակցում էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ.Գրիգորյանը, ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա.Հովհաննիսյանը, ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետի պարտականությունները կատարող, ոստիկանության գնդապետ Գ.Կարապետյանը, պրակտիկայի ղեկավարները:

Հրահանգավորման ընթացքում ակադեմիայի պետ Գ.Գրիգորյանը, անդրադառնալով պրակտիկայի անցկացման կարգի, նպատակների ու խնդիրների առանցքային կողմերին, կարևորեց իրավապահ կառույցների հետ համագործակցությունը՝ կարևորելով տեսական գիտելիքները պրակտիկ գործունեությունում ստեղծագործաբար կիրառելու համար հմտությունների ձեռքբերման անհրաժեշտությունը:

Այնուհետև ակադեմիայի պետի տեղակալ Ա.Հովհաննիսյանը հայտարարեց ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի հրամանը՝ պրակտիկան կազմակերպելու մասին:

Հրահանգավորման ավարտին պարոն Գ. Գրիգորյանը համապատասխան ցուցումներ տվեց պրակտիկայի ղեկավարներին՝ պրակտիկայի անցկացման ու ղեկավարման մեթոդական ապահովման վերաբերյալ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

2024թ. հունիսի 4-ին ՆԳՆ կրթահամալիրում Հայկական Կարմիր խաչի սոցիալ-առողջապահական բաժնի մասնագետներն Ավստրիական զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող «Համաճարակային պատրաստվածություն և արձագանք համավարակներին Հայաստանում և Վրաստանում» ծրագրի շրջանակներում տեղեկատվական հանդիպում ունեցան Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի ներկայացուցիչների հետ: Օրվա թեման էր՝ «Ինչպես լինել պաշտպանված վարակներից և կանխարգելել համաճարակները»: Հանդիպման ընթացքում քննարկվեցին համաճարակներից խուսափելու համար կիրառվող միջազգայնորեն ընդունված մի շարք կանոններ, որոնք անհրաժեշտ են ցանկացած մարդու բնականոն ապրելակերպ վարելու ընթացքում:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՎԵՑԻՆ ՎԱՐԺԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ

2024 թ. մայիսի 27-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորողների 2023-2024 ուստարվա վարժախաղերի հրահանգավորումը:

Միջոցառմանը մասնակցում էին կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ.Գրիգորյանը, ակադեմիայի ղեկավար կազմի ներկայացուցիչները, խաղային խմբերի ղեկավարները, վարժախաղերին որպես խորհրդատու ներգրավված ծառայողները, ինչպես նաև իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորողները:

Կրթահամալիրի ակադեմիայի պետ Գ.Գրիգորյանն իր խոսքում կարևորեց պրակտիկայի ընթացքում ձեռք բերված հմտությունների և ունակությունների ամրապնդման գործում վարժախաղերի դերը՝ սովորողների և խաղային խմբերի ղեկավարների ուշադրությունը հրավիրելով վարժախաղերի առավել առանցքային խնդիրների վրա:

Այնուհետև կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետի պարտականությունների կատարող, ոստիկանության գնդապետ Գ.Կարապետյանը ներկայացրեց կրթահամալիրի պետի հրամանով ձևավորված վարժախաղերի խմբերը, դրանց ղեկավարներին և խորհրդատուներին:

Միջոցառման ավարտին ակադեմիայի պետ Գ.Գրիգորյանը պատասխանեց սովորողների հարցերին:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 4-ին ՆԳՆ կրթահամալիրում տեղի ունեցավ Ուսանողական խորհրդի նախագահի ընտրություն, որին մասնակցեցին ուսանողական խորհրդի բոլոր անդամները: ՈՒԽ նախագահ վերընտրվեց անվճար կրթաձևի 3-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Հարություն Հարությունյանը: Նա ողջունեց ՈՒԽ անդամներին, մաղթեց ակտիվ ու արդյունավետ աշխատանք, ներկայացրեց հետագա անելիքներն ու գործողությունների հաջորդականությունը: Կանոնադրության համաձայն՝ ՈՒԽ քարտուղար նշանակվեց վճարովի կրթաձևի 3-րդ կուրսի սովորող Մելսիդա Ավետիսյանը: Այնուհետև ընտրվեցին ՈՒԽ հանձնախմբերը, ու նշանակվեցին դրանց նախագահները. կազմակերպչական հանձնախմբի նախագահ ընտրվեց անվճար կրթաձևի 2-րդ կուրսի սովորող Էդգար Դալլաքյանը, Արտաքին կապերի հանձնախմբի նախագահ ընտրվեց վճարովի կրթաձևի 2-րդ կուրսի սովորող Գայանե Բաբաջանյանը:

Ամփոփելով տարեվերջյան ծրագրերը՝ նիստն ավարտվեց հաջորդ հանդիպմանն առավել ակտիվ ու արդյունավետ ծրագրերի ակնկալիքով:

ԵՐԲ ԿԱ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵԼՔ ԿԳՏՆՎԻ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի 3-րդ կուրսի սովորող Ավետ Ավետիսյանի հետ:

- Ինչպիսի՞ն էր փոքրիկ Ավետը: Երեք նախադասությամբ պատմի՛ր քո մասին:

- Եղել եմ չափազանց կարգապահ, զգուշավոր և հետաքրքրասեր երեխա: Միշտ շփվում էի ինձնից տարիքով մեծ երեխաների հետ: Սիրում էի, երբ մեծերը տարբեր հետաքրքիր պատմություններ էին պատմում:

- Կպատմե՞ս դպրոցական տարիներից:

- Դպրոցում սովորել եմ գերազանց առաջադիմությամբ, ակտիվ մասնակցել եմ դպրոցում և դրանից դուրս կազմակերպված բոլոր միջոցառումներին և մրցույթներին: Դպրոցական տարիներից եմ սկսել թիմային մտածողություն ձեռք բերել: Միշտ սիրել եմ պատմությունն ու մաթեմատիկան, շատ էի ուսումնասիրում Նապոլեոն Բոնապարտին և Ուինսթոն Չերչիլին:

- «Փոքրիկ իշխան». Անտուան դը Սենտ-Էքզյուպերի... Ինչպիսի՞ն է քո ստեղծած այլ մոլորակը:

- Ես երբեք չեմ ապրել իրականությունից կտրված և միշտ փորձել եմ տեսնել իրական կյանքի լավ կողմերը:

-Ի՞նչ ես կարծում, կա՞ն վատ գրքեր:

- Այո՛, իհա՛րկե, սակայն դա բացառապես սուբյեկտիվ ընկալմամբ է այդպես: Մարդիկ տարբեր են, և յուրաքանչյուրն ինքն է ընտրում ստեղծագործության լավ կամ վատ լինելը:

- Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը, և ո՞ր գիրքն է, որ 2-րդ անգամ կընթերցես:

Ընդհանրապես ես պատմավեպերի սիրահար եմ, սակայն ինձ ամենից շատ տպավորել է Ռաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» վեպը, քանի որ մեր շրջապատում շատ կան գրքի հերոսներից, և այն առավել քան մեր ժամանակներին բնորոշ գիրք է:

- Ինչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

- Ինձ համար չկան երազանքներ, այլ կան նպատակներ: Կյանքիս այս փուլում իմ նպատակն է արդարացնել բոլոր այն հույսերը և սպասումները, որոնք կապված են ինձ հետ, և դառնալ այնպիսի մասնագետ, որը պիտանի կլինի իր երկրին և ազգին:

- Խոսենք նախասիրություններից՝ ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Շատ եմ սիրում զբոսնել: Այդ ընթացքում են ի հայտ գալիս այն հարցերի պատասխանները, որոնք հաճախ անհնարին են թվում:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Շատ բարդ էր մասնագիտության ընտրությունը, քանի որ բոլոր մասնագիտություններն էլ ինձ հետաքրքրում էին: Սակայն այս հարցում վերջնական կողմնորոշվել եմ, երբ հասկացել եմ, որ այս մասնագիտությամբ է հնարավոր առավել նպաստ ունենալ պետության կայացման գործում, և իրավաբանությունն է այն բացառիկ մասնագիտությունը, որին բնորոշ են իմ մտածողությունն ու սկզբունքները:

- Ուսանողական տարիներ. ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

▶ 4

ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 30-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական կրթության «Պարեկ» և «Քրեական ոստիկան» որակավորման դասընթացներն անցնող սովորողների «Ոստիկանության ծառայողի երդման» հանդիսավոր արարողությունը:

Սովորողները ՀՀ եռագույն դրոշի ներքո հանդիսավոր կերպով երդվեցին հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին, անվերապահորեն ղեկավարվել օրենքներով, պաշտպանել հայրենիքը, պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը, արդար և անկողմնակալ իրականացնել լիազորությունները, ազնիվ և բարեխիղճ կատարել ծառայողական պարտականությունները:

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էր ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավարությունը՝ կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Մուրադյանի գլխավորությամբ:

Մ.Մուրադյանը հիշարժան օրվա կապակցությամբ սովորողներին շնորհավորեց և հետագա ծառայության մեջ հաջողություններ մաղթեց, որից հետո հնչեց ՀՀ օրհներգը: Արարողությունը եզրափակվեց սովորողների հանդիսավոր երթով:

ԿԼՈՐ-ՍԵՂԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ «ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ

Այսր թվականի հունիսի 4-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի կողմից կազմակերպված կլոր-սեղան քննարկումը: Քննարկման թեման էր «Թրաֆիքինգի կանխարգելման արդի հիմնախնդիրները»: Հրավիրված էին ՀՀ գլխավոր դատախազության՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Տ.Պողոսյանը, ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության՝ Մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Տ. Կիրակոսյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի մասնագետ Ա. Թաթոյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ հետախուզման, անօրինական միգրացիայի և ահաբեկչության դեմ պայքարի վարչության թրաֆիքինգի դեմ պայքարի բաժնի ՀԿԳ ավագ օպերլիազոր, ոստիկանության մայոր Վ. Վարդանյանը, Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն ՀԿ ներկայացուցիչ Ա. Գաբրիելյանը: Ներկա էին ակադեմիայի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և տարբեր կուրսերի սովորողները:

Բացման և փակման խոսքով հանդես եկավ կրթահամալիրի պետ, հ.գ.թ., դեցենտ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը:

Քննարկման ընթացքում զեկույցներով հանդես եկան Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դասախոս, հ.գ.թ., դոցենտ Դ. Թումասյանը, ՀՀ գլխավոր դատախազության՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Տ. Պողոսյանը, ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության՝ Մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Տ. Կիրակոսյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի մասնագետ Ա. Թաթոյանը, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման 3-րդ կուրսի սովորողներ՝ Ժ. Տեփանոսյանը, Ա. Հովհաննիսյանը:

Առաջադրվեցին հարցեր և քննարկվեցին դրանց հնարավոր լուծումները:

Հետաքրքիր և բովանդակալից քննարկման ընթացքում պայմանավորվածություն ձեռքբերվեց քննարկումները դարձնել շարունակական և համագործակցությամբ կատարել ոլորտային հետազոտություններ:

3 ◀ - Այստեղ ուսանողական կյանքը շատ հետաքրքիր և բովանդակալից է: Սովորական դասապրոցեսից զատ, Կրթահամալիրը հնարավորություն է ընձեռում նաև պրակտիկ գիտելիքներ ստանալու՝ անընդհատ կազմակերպվող բանավեճերով, դատախաղերով, քննարկումներով: Կրթահամալիրի յուրաքանչյուր նոր ձեռքբերում առաջին հերթին անդրադառնում է ուսանողի մտածողության և ձգտումների վրա:

- Մի քանի բառով նկարագրի՛ր Կրթահամալիրի սովորողի կերպարը:

- Պետականամետ, կարգապահ, իրավագիտակից:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունը, ի՞նչ կընտրեիր:

- Բժիշկ կդառանայի, որովհետև միշտ ինձ պատկերացրել եմ այդ մասնագիտության մեջ՝ չնայած որ իրավաբաններին ես համարում եմ հասարակության բժիշկներ:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Այդ թեման պետականությունն ու հայրենիքն է: Զարգացած և ուժեղ պետություն ունենալու համար յուրաքանչյուրն իր ներդրումը պետք է ունենա: Սակայն սա այն հարցն է, երբ անդադար խոսքին զուգահեռ պետք է լինի անդադար գործ, քանի որ կատարած աշխատանքն է ցույց տալիս խոսքի ուժը:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Ինձ համար կյանքի շարժիչ ուժը միանշանակ ներկայի աշխատասիրությունն ու ձգտումն է և ապագայի տեսլականը: Առանց մեկի հնարավոր չէ պատկերացնել մյուսը:

Բլից հարցեր

Պատասխանում ենք կարճ և արագ:

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Սկզբունքային, ինքնավստահ և զգուշավոր:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Յուրաքանչյուր օր մի նոր սկիզբ է:

- Օրն սկսում ես ժամը...

- 7:30:

- Սիրածդ աֆորիզմը:

- Վատատեսը ամեն հնարավորության մեջ դժվարություն է տեսնում, լավատեսը ամեն դժվարության մեջ՝ հնարավորություն:

- Սիրելի զբաղմունքդ:

- Շախմատ խաղալ:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Ոչ մեկին մի՛ պատասխանիր,երբ զայրացած ես,
Ոչինչ մի՛ խոստացիր, երբ երջանիկ ես,
Ոչինչ մի՛ որոշիր, երբ տխուր ես:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին)

- Երբ կա վճռականություն, ելք կգտնվի:

Հարցազրույցը վարեց
առաջատար մասնագետ
Լիանա Սահակյանը

— ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ —

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐ

Կյանքը լի է նպատակներով, որոնց պետք է հասնել պայքարելով: Ես շա՜տ նպատակներ ունեմ: Դրանցից մի մասն արդեն իրականացել է: Նպատակներին հասնելու համար ոգեշնչման աղբյուր է անհրաժեշտ: Իմ ոգեշնչման աղբյուրներն են հայրենիքս և ընտանիքս:

Մի բան հաստատ որոշել եմ. ընտրել եմ այնպիսի մասնագիտություն, որի համար հետագայում չեմ փոշմանի և պատրաստ եմ նույնիսկ շրջանցել անհաղթահարելի թվացող կարծրատիպերի լեռնաշղթան:

Ո՛վ գիտի, իմ փորձը գուցե օրինա՞կ դառնա ուրիշներին: Մասնագիտությանս ընտրության հիմքում ընկած է վաղ հասակից իմ մեջ սերմանած հայրենասիրությունը: Նշեմ, որ ինչ մասնագիտություն էլ ընտրեի, ինձ համար կարևորն այն է, որ ձեռք բերած գիտելիքներն ու կարողություններն առավելագույն չափով ծառայեն հայրենիքիս, ընտանիքիս բարեկեցությանը: Առաջնորդվելով այս սկզբունքներով՝ ընտրեցի ոստիկանի մասնագիտությունը: Ինչպես տեսնում եք, դիմեցի ռիսկի, չեմ հանձնվել և այսօր այստեղ եմ նպատաներիս իրականացնելու և պարտքս կատարելու համար: Ինձ համար պատիվ է համազգեստ կրելը, ինչպես նաև մեծ պատասխանատվություն՝ ծառայել հայրենիքին, ծառայել օրենքին, ստանձնել ոստիկան կոչվելու առաքելությունը և պատվով իրականացնել այն: Չէ՞ որ Հայաստանը մենք ենք՝ ես և դու, մեզնով է մեր հայրենիքը կանգուն, մենք ենք նրա ապագան, նրա շենացնողը և պաշտպանողը, ուրեմն, եկե՛ք լինենք միասնական: Ես պարտավոր եմ ապրել ու աշխատել Հայաստանում, շենացնել մեր երկիրը, որ հայ մանուկը չծնվի օտար հողում. նրա մանկությունը պետք է անցնի իր հայրենիքի խաղաղ երկնքի տակ:

Դժվար էր մեր ուղին, բայց նպատակը վեհ էր...
Իսկ դեպի վեհ նպատակ տանող ուղին հաղթանակ է:
Մոնթե Մելքոնյան

Երեմ Դալարյան
քոլեջ, առաջին կուրս,
ոստիկանության ենթասպա

Ստեղծագործում են մերոնք

ԴՈՒ ՄԵՂՔ ԵՍ ԳՈՐԾԵԼ

Մի օր ես էլ կհեռանամ,
Կանէանամ քո աչքերից,
Ու չես լսի ինձնից ոչինչ,
Ո՛չ գովասանք,
Ո՛չ խոստումներ,
Ո՛չ լացուկոծ,
Ո՛չ էլ քրքիջ:

Մի օր ես էլ կմոռանամ,
Կվերանաս իմ մտքերից,
Ու չեմ հիշի քեզնից ոչինչ,
Ո՛չ մերժումներ,
Ո՛չ կեղծիքներ,
Ո՛չ տառապանք,
Ո՛չ էլ քեզ պես շքեղ մատնիչ:

Բայց իմ սերը՝ քո չսիրած,
Մի օր պիտի դառնա սիրված,
Մի օր պիտի դու հասկանաս,
Որ մերժել ես աչքերդ փակ,
Միտքդ քնած, սիրտդ կապած:

Իսկ երբ արդեն դու ուշքի գաս,
Աչքիդ դիմաց խիղճդ կանգնած
Պիտի ասի՝ ուշ է արդեն, ուշացել ես,
Բախտդ քեզնից վտարել ես,
Քայքայել ես քեզ սիրողին,
Դատարկել ես նրա հոգին,
Սիրտը նրա դու այրել ես
Ու հանձնել ես կավե հողին:

-Վե՛ր կաց, գնա՛ ափսոսանքով
Ու տառապի՛ր կյանքում այնքան,
Մինչ հանձնվես դու էլ հողին:
Թեկուզ այնժամ քո նոր կյանքում
Ու երազում՝ քո երկնային,
Պատմես, ճչաս դու բոլորին,
Որ մարդկային սիրո դիմաց
Մեղք ես գործել անմարդկային:

Նարեկ Բեկթաշյան
(շրջանավարտ)

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 29.06. 2024թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան